ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԱՐԻԿ ՄԻԵՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 311-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Գարիկ Միերյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2023 թվականի օգոստոսի 7-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Գարիկ Միերյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով վերջինս խնդրել է.

«Սահմանադրության 63-րդ հոդվածով հռչակված՝ արդար դատաքննության իրավունքին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասը՝ թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով դատարանների կողմից տրված այն մեկնաբանության կամ այն բովանդակության շրջանակներում, որ որևէ պատշաճ պատճառաբանությամբ դատարանը կարող է չպահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված հարցերի քննարկման հաջորդականությունը, այն է՝ որևէ պատշաճ պատճառաբանությամբ դատարանը, մեղադրյալին զրկելով իր գործը քննող դատավորին բացարկ ներկայացնելու հնարավորությունից, կարող է երկարաձգել տվյալ մեղադրյալի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը և միայն դրանից հետո վերադառնալ օրենսդրական հաջորդականության մեջ առաջինը նշված հարցի քննարկմանը՝ քննության առնելով դատավորին ներկայացված բացարկը»:

2. Ներկայացնելով Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի մարտի 24-ին թիվ ՀԿԴ/0038/15/23 գործով կայացրած որոշումը, ինչպես նաև ՀԿԴ/0095/01/23 գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ թիվ ՀԿԴ/0038/15/23 գործի շրջանակներում Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Ա. Գրիգորյանը 2023 թվականի մարտի 24-ի որոշմամբ արձանագրել է, որ «թիվ 62231722 քրեական վարույթի շրջանակներում ձեռք բերված բավարար ապացույցների գերակշռությամբ հիմնավորվել է այն հանգամանքը, որ «Բիգ-Կապիտալ» ՍՊ ընկերության անվամբ գրանցված՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան փողոց, թիվ 60/4 հասցեում գտնվող 0,208 հա մակերեսով հողամասը, ինչպես նաև Ասատուր Տիգրանի Մաթևոսյանի անվամբ գրանցված՝ ք. Երևան, Աջափնյակ, Գ-1 թաղամաս, 14/16 հասցեում գտնվող, 0,1 հա մակերեսով հողամասն ուղղակի ստացվել են հանցագործության արդյունքում»: Հետևաբար, ըստ Դիմողի, դեռևս 2023 թվականի մարտի 24-ի դրությամբ դատավոր Ա. Գրիգորյանն ունեցել է ձևավորված համոզմունք, որ վերոհիշյալ հողատարածքները մասնավոր անձանց սեփականություն են դարձել հանցագործության արդյունքում:

Դիմողի պնդմամբ՝ վերոնշյալով փաստվում է, որ թիվ ՀԿԴ/0095/01/23 գործով ապացուցման ենթակա այն հանգամանքը, թե արդյո՞ք իրեն մեղսագրված արարքները կատարված հանցագործության մասին են վկայում, թե՝ ոչ, թիվ ՀԿԴ/0095/01/23 գործը քննող դատավոր Ա. Գրիգորյանը 2023 թվականի մարտի 24-ի դրությամբ արդեն իսկ համարել է ապացուցված:

Դիմողը նշում է, որ 2023 թվականի մայիսի 31-ի դրությամբ առկա է եղել թիվ ՀԿԴ/0095/01/23 գործով վարույթը ստանձնած դատավոր Ա. Գրիգորյանին իր կողմից բացարկ ներկայացնելու դատավարական ակնհայտ հիմք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ այն պատճառաբանությամբ, որ թիվ ՀԿԴ/0038/15/23 գործի շրջանակներում 2023 թվականի մարտի 24-ին կայացված «(...) որոշման մեջ տեղ գտած՝ դատավոր Ա. Գրիգորյանի վերոհիշյալ համոզմունքն ակնհայտորեն ողջամիտ կասկած է հարուցում թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով վարույթի հետ կապված նրա անկողմնակալության մեջ»:

Դիմողը փաստում է, որ թիվ ՀԿԴ/0095/01/23 գործով կայացրած որոշումներով դատարանները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորումը մեկնաբանել են այն բովանդակությամբ, որ որևէ պատշաճ պատճառաբանությամբ դատարանը կարող է չպահպանել տվյալ հոդվածով նախատեսված հարցերի քննարկման հաջորդականությունը, այն է՝ որևէ պատշաճ պատճառաբանությամբ դատարանը, մեղադրյալին զրկելով իր գործը քննող դատավորին բացարկ ներկայացնելու հնարավորությունից, կարող է երկարաձգել տվյալ մեղադրյալի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը և միայն դրանից հետո վերադառնալ օրենսդրական հաջորդականության մեջ առաջինը նշված հարցի քննարկմանը՝ քննության առնելով դատավորին ներկայացված բացարկը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիմողը եզրահանգում է, որ թիվ ՀԿԴ/0095/01/23 գործի շրջանակներում դատարանների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասին տրված վերոնշյալ մեկնաբանությունը հակասում է Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով հռչակված՝ արդար դատաքննության իրավունքի բովանդակությանն այնքանով, որքանով զրկում է մեղադրյալին իր գործի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից քննվելու և լուծվելու իրավունքից, և թույլ է տալիս, որ մեղադրյալի գործը քննի և տվյալ գործով որոշում կայացնի այն դատարանը, որի՝ օրենքի հիման վրա ստեղծված չլինելու մասին կասկածները քրեադատավարական պատշաճ ընթացակարգով չեն փարատվել:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է*

դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը****, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ **վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր**:

Նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման իրավաչափության հարցի քննարկման պարագայում Սահմանադրական դատարանը կստանձնի դատական ակտ վերանայող դատական ատյանի գործառույթ, որը ոչ միայն չի բխի Սահմանադրության

և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումներից, այլև փաստացի կվերացնի Սահմանադրական դատարանի և եռաստիճան դատական համակարգում գործող դատարանների գործառույթների տարանջատումը:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ ակտի, ինչպես նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատումը:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով Դիմողը, ձևականորեն վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը, **ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես՝ Դիմողն իր անհատական դիմումով ներկայացրել է հետևյալ դիրքորոշումները.

*- «(...) Թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով կայացած առաջին դատական նիստում՝ 2023թ. մայիսի 31-ին, ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Ա. Գրիգորյանն առաջինը քննության առարկա է դարձրել **ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ դատավորին բացարկ ներկայացնելու, այլ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հարցը** (...)»:*

*- «(...) դեռևս 2023թ. մարտի 24-ի դրությամբ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Ա. Գրիգորյանը **ունեցել է ձևավորված համոզմունք՝ այն մասին, որ վերոհիշյալ հողատարածքները մասնավոր անձանց սեփականություն են դարձել***

հանցագործության արդյունքում, *հետևաբար՝ արդեն իսկ փաստվում է, որ թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով ապացուցման ենթակա այն հանգամանքը, թե արդյոք Գարիկ Միերյանին մեղսագրված արարքները կատարված հանցագործության մասին են վկայում, թե՝ ոչ,* ***արդեն իսկ թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործը քննող դատավոր Ա. Գրիգորյանը 2023թ. մարտի 24-ի դրությամբ, փաստորեն, համարել է ապացուցված****»:*

- «(…) ***այն դեպքում, երբ դատարանը, մինչև մեղադրյալի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետի երկարաձգման հարցը քննության առնելը պաշտպանության կողմին իրեն բացարկ ներկայացնելու հնարավորություն տալու օրենսդրական պարտականություն ունենալով, այդուհանդերձ, պաշտպանության կողմին զրկում է օրենքի հիման վրա ստեղծված չլինելու մասին փաստարկումների հիմքով գործը քննող դատավորին բացարկ ներկայացնելու հնարավորությունից, ապա այդպիսի հնարավորությունից պաշտպանության կողմին զրկելը միանգամից, այն է՝ առանց հավելյալ փաստարկների վկայակոչման անհրաժեշտության, վկայում է այն մասին, որ մեղադրյալի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետի երկարաձգման հարցը քննության առած և այդ կապակցությամբ որոշում կայացրած դատարանը օրենքի հիման վրա ստեղծված չի եղել ու չի բավարարել արդարադատություն իրականացնելիս անկողմնակալ լինելու և երևալու պահանջին*** *(…)»:*

- «(…) 2023թ. մայիսի 31-ի թիվ ՀԿԴ/0095/01/23 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասին ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից փաստացիորեն տրված նման մեկնաբանությունը դիմող Գարիկ Միերյանի համար առաջացրել է իրավական հետևանք, այն է՝ դիմող Գարիկ Միերյանը զրկվել է իր գործը քննող դատարանին բացարկ հայտնելու, և ըստ այդմ, Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար իրավունքն իրացնելու, հետևապես՝ իր գործը, այն է՝ իր նկատմամբ կիրառված կալանքի ժամկետի երկարաձգման հարցը անաչառ դատարանի կողմից քննության առնվելու՝ սահմանադրորեն երաշխավորվող հնարավորությունից»:

- «(...) եթե թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ հակակոռուպցիոն դատարանի, ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի ու ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից չկիրառվեր Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին առերևույթ հակասող վերոհիշյալ մեկնաբանությամբ, ապա.

- ***ՀՀ հակակոռուպցիոն դատարանը թիվ ՀԿԴ/0095/01/23 քրեական գործով առաջին դատական նիստում՝ 2023թ. մայիսի 31-ին, պարտավոր էր լինելու ապահովել, որպեսզի մեղադրյալ Գարիկ Միերյանն իրացնի իր գործը քննող դատավորին բացարկ հայտնելու՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվող արդար դատաքննության իրավունքի բովանդակության մաս կազմող հնարավորությունը՝ (...):***
- ***ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը կամ ՀՀ Վճռաբեկ դատարանը պետք է բեկանեին ստորադաս դատարանի դատական ակտը՝ քրեադատավարական օրենքի խախտում, այն է՝ վարույթի հանրայնության սկզբունքը հռչակող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ ու 4-րդ մասերի խախտումներ թույլ տրված լինելու հիմքով, (...)»:***

Հաշվի առնելով վերոշարադրյալը և նկատի ունենալով Դիմողի կողմից դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ վերջինս **վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են դատարանների **գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Ելնելով ողջ վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության գնահատում, այլ դատարանների գործողությունների (կայացրած

դատական ակտերի) իրավաչափության ստուգում, որը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Գարիկ Մհերյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

30 օգոստոսի 2023 թվականի
ՍԴԱՈ-96